ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻ, ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Դ Ի Մ Ո Ւ Մ Ը

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻՆ, ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Թանկագին ընկերներ։

Լեռնային Ղարաբաղի վերջին իրադարձությունների կապակցությամբ իրադրությունը հանրապետությունում վերստին սրվել է։ Երևանում անընդհատ տեղի են ունենում չարտոնված միտինգներ, ցույցեր, երթեր։ Հնչում են գործադուլ անելու անպատասխանատու կոչեր։ Մարդկանց, հիմնականում՝ երիտասարդության ստվար խմբեր, որոնց հրահրում են ոչ հասուն տարրերը, շրջափակում են Կենտկոմի, Գերագույն սովետի Նախագահության շենքերը, փորձում խանգարել քաղաքային տրանսպորտի, արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքը, ձախողել պարապմունքները ուսումնական հաստատություններում, նույնիսկ՝ դպրոցներում։ Կազմակերպված ճնշում է գործադրվում դեպուտատների վրա՝ ԼՂԻՄ-ի միավորման հարցը քննարկելու նպատակով անհապաղ հանրապետության Գերագույն սովետի նստաշրջան հրավիրելու պահանջով, չնայած այդ հարցի մասին արդեն ընդունվել է հայտնի որոշումը։

Այս ամենը կատարվում է այն ժամանակ, երբ ՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահության և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի ձեռնարկած միջոցների շնորհիվ կյանքը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում աստիճանաբար սկսել էր նորմալ հուն մտնել։ ԼՂԻՄ-ի սոցիալ-կուլտուրական զարգացմանն ուղղված կոնկրետ քայլերին ակտիվորեն մասնակցում է մեր հանրապետությունը։ ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահության ստեղծած հանձնաժողովը, ԼՂԻՄ-ում ՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահության մշտական ներկայացուցիչ ընկ. Ա. Ի. Վոլսկին հաստատակամորեն ուղիներ են որոնում մարզում կուտակված պրոբլեմների լուծման համար։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի օրերս տեղի ունեցած պլենումը մշակեց հանրապետության էկոնոմիկայում, սոցիալական ոլորտում առաջացած լրացման երևույթների հաղթահարման և գաղափարաբարոյական իրադրության առողջացման հստակ ծրագիր, որը ըմբռնումով ընդունեցին ու պաշտպանեցին աշխատավորները։ Սակայն կուսակցական, սովետական, տնտեսական մարմինները տվյալ իրավիճակում հնարավորություն չունեն կազմակերպելու առաջադրված բարդ խնդիրների արդյունավետ կատարումը։

Հանրապետությունում ստեղծված իրադրությունը հղի է անկանխատեսելի հետևանքներով, որոնք կարող են մեզ ոչ միայն հետ շպրտել վերջին ամիսներին նվաճվածից, փակուղի մտցնել, այլև մեր ժողովրդին դնել անելանելի կացության մեջ։ Այն, ինչ կատարվում է, խորապես անհանգստացնում է հանրապետության աշխատավորներին։ Իրադարձությունները դուրս են գալիս դեմոկրատական պրոցեսների սահմաններից, ընդունում վտանգավոր բնույթ՝ հիվանդագին զգացմունքներ և տագնապ առաջացնելով մարդկանց հոգիներում։

Միտինգներում սկսել են հնչել հույժ վտանգավոր կոչեր, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեն ԼՂԻՄ-ի պրոբլեմների հետ։ Քաղաքականապես ոչ հասուն մարդիկ, խաղալով ժողովրդի ազգային սրբազան զգացմունքների, Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ապրումներին մասնակից լինելու բնական ձգտման վրա, ամեն կերպ սրում են իրադրությունը՝ դիմելով հակահիրավական գործողությունների։ Նրանք չեն ընկրկում անխոհեմ արարքների մեջ նույնիսկ դեռահասներին ու դպրոցականներին ներգրավելու առջև, չմտահոգվելով, թե ինչ ավերիչ փորձության են ենթարկվում նրանց հոգիները։ Այս ամենը արդարացի վրդովմունք է առաջացնում սթափ, առողջ ուժերի, բոլոր ողջախոհ մարդկանց մեջ, ովքեր իսկապես մտահոգված են հայ ժողովրդի ճակատագրով։ Ծայրահեղ անհանգստություն է հարուցում նաև այն հանգամանքը, որ հաճախ փորձեր են արվում մարդկանց սոցիալական աճած ակտիվությունն ուղղել քաղաքականապես վնասակար հուն, չմտածելով՝ ո՞ւմ է դա ձեռնտու։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմը, հանրապետության Գերագույն սովետի նախագահությունը և Մինիստրների խորհուրդը խորապես մտահոգված են Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրադրությամբ և վճռականորեն դատապարտում են հրահրված անկարգությունները, որոնք ծանր հետևանքներ են ունեցել։ Կիսելով մեր հայրենակիցների տագնապն ու անհանգստությունը և խորին կարեկցանք հայտնելով տուժածներին, մենք դիմում ենք մեր ժողովրդի բանականությանը, անկեղծ հայրենասիրական զգացմունքներին։

Հանուն հայ ժողովրդի ապագայի մենք կոչ ենք անում ցուցաբերել զգոնություն, ինքնատիրապետում, զսպվածություն, գիտակցել այն վտանգը, որի առջև կարող է հայտնվել մեր ժողովուրդը, եթե կրքերը շարունակեն բորբոքվել, եթե գերիշխեն զգացմունքները։ Ճիշտ է ասված, որ մարդիկ դաս են առնում սխալներից, իսկ ժողովուրդները՝ ողբերգություններից, որոնք, սակայն, շատ թանկ են արժենում։

Մեր հասարակության դեմոկրատացումը ստեղծում է ժողովրդի կամքի ազատ արտահայտման պայմաններ, սակայն դեմոկրատական պետությունը չի կարող թույլ տալ, որպեսզի առանձին անձինք, օգտագործելով իրենց տրված իրավունքները, ոտնահարեն օրենքները, արհամարհեն հասարակության հանդեպ ունեցած իրենց պարտականությունները։

Այս ծանր, տագնապալի օրերին հանրապետության յուրաքանչյուր քաղաքացուց պահանջվում են գերագույն զսպվածություն և բարձր պատասխանատվություն ժողովրդի ճակատագրի և նրա ապագայի համար։ Մենք չենք կարող թույլ տալ, որպեսզի կույր տարերքը մթագնի մարդկանց բանականությունը։

Հայրենակիցնե՛ր։

Հայ ժողովուրդը դարերով պայքարել է իր անկախության, իր պետականության վերականգնման, իր լեզվի, մշակույթի, ինքնատիպության պահպանման համար։ Հայ ազգային ազատագրական շարժման ականավոր գործիչները իրենց հույսերը միշտ կապում էին ռուս ժողովրդի հետ։ Իր ազգային վերածննդով, համախմբմամբ, պետականության վերականգնմամբ և այն ամենով, ինչին հայ ժողովուրդը հասել է վերջին 70 տարում, նա պարտական է մեծ Հոկտեմբերի հաղթանակին, Հայաստանում սովետական իշխանության հաստատմանը։

Մենք դիմում ենք մեր փառապանծ բանվոր դասակարգին, գյուղացիությանը, մտավորականությանը, երիտասարդությանը, մեր մայրերին ու երեխաներին, բոլոր նրանց, ում թանկ է Հայաստանի ճակատագիրը. արժանի եղեք հայ ժողովրդի հայրենասիրական և ինտերնացիոնալ ազնիվ ավանդույթներին, մեր ժողովրդի, մեր երկրի ազատության ու անկախության պայքարում ընկած հազարավոր զոհերի հիշատակին։

Մենք կոչ ենք անում ձեզ կանգ առնել ու խորհել, գործիք չդառնալ կույր ուժերի ձեռքին, հիշել, որ մենք բոլորս միասին և յուրաքանչյուրս առանձին պատասխանատու ենք ոչ միայն մեր երեխաների ապագայի, մեր ժողովրդի ճակատագրի, այլև մեր ընդհանուր տան՝ ամբողջ երկրի համար, հեղափոխական վերակառուցման, դեմոկրատացման ու հրապարակայնության համար։

Եվ թող այս տագնապալի ժամին ձեզ չլքեն իմաստնությունն ու իրատեսության զգացումը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐ

21 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1988 Թ.